ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ
ԵՒ ԴՐԱՄ
ՂՐԿԵԼՈՒ ՀԱՍՑԷ
M. BENIARD.
22, Ormiston Road,
Shepherd's Bush.
London, W. (Angleterre)

Ամեն բան ժողովրդի միջոցով, ժողովրդի կամքով եւ ժողովրդի համար:

Իւրաքանչիւրի եւ ընդհանուրի հաւասարապէս բարեկեցիկ կեանք — դա՛ է ճշմարիտ ազատութիւն:



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՄԵՆ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ

ՏԱՐԵԿԱՆ	5	Ֆր.
ԿԷՍ ՏԱՐՒԱՆ	3	„
ՄԻ ՀԱՄԱՐԸ	½	„

Ժողովո՜ւրդ, դու ինքդ միայն կարող ես ձեռք բերել քո ազատութիւնը:

Արեան ճանիճներ — անս ազատութեան ճանապարհը:

Ժողովո՜ւրդ, մի աղերսիր, այլ պահանջիր եւ ձեռք բեր:

ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ—ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ | ԼՈՆԴՈՆ | Nr 10. ՓԵՏՐՎԱՐ. Nr 10. | 1896 | ՄԻԱՄՍԵԱՅ

ՊԱԼԱՏԻՑ ԴՈՒՐՍ... ՄԻ ԺԱՄ ՃԱՆԱՊԱՐՀ.

Քաջ Համիդը երկաթեայ ամուր տակառումն է իր մօր փէշքերի տակ: Իր շուրջը՝ ձիաւոր գնդեր: Նա վախ չունի սպանուելու..: Նա քաջ է:

ԱՃՊԱՐԱՐ ԲՌՆԱՊԵՏԸ.

— Որքա՞ն գլուխ գեավուր մորթվեցաւ իմ այս վերջին ընդհանուր դատաստանի միջոցին, հարցնում էր սուլթանն իր մեծ ու պստիկ եպարքոսից, ինչպէս, օրինակ, եթէ դուք հարցնէիք, թէ՝ „որքան գլուխ ոչխար մորթվեցաւ Ներոնի կամ Կալիգուլայի այս կամ այն տօնի միջոցին“:

Եպարքոսը, մէկ անվրդով երեսով, պատասխանեց. —

— Վաթսուն հազարից անցնում է նրանց թիւը Ջերդ վեհափառութեան շնորհով:

Եւ սուլթանը մտածեց, որ այդ զոհաբերութիւնն առայժմ թերևս բաւական համարվէ իր Մուհամմէդի փառքի համար: Ինքնաբաւական կերպով նա ծալապատիկ նրստած իր ոտներն աւելի քաշեց իր տակը և կկլացրեց անուշ նարգիլէն նոյնպիսի հաճոյքով, որպիսով նա հրամաններ է արձակում „գլուխ մորթելու“ մասին:

Բայց սակայն Ռամազանը մօտենում էր արագաբար. մօտենում էր նաև այն սոսկալի օրը, երբ սուլթանը, տանջվելով աշխարհիս ամէն տեսակ երկիւղներով և դողալով իր երկրի ջերմոտ ծովափերի ամենակատաղի ջերմով, պէտք է երթար Կ. Պօլսից դուրս իր խալիֆայական շքերթներով համբուրելու Մուհամմէդի նուիրական վերարկուն: Այդ օրը նա իր մարգարէին անիծեց, մի բան, որ իրան սուղ կը նստէ ապագայում, եթէ միայն նրա աստուածըն իր բարկութիւնը թափէ նրա գլխին մի սարսափելի նզովքով: Բայց մեզ թւում է, որ այդ խելացի մարգարէն այնքան վեհանձն է, որ թաց-չոր վախկոտներին նզովելն իսկ արհամարհում է: Կուրանի հեղինակի այդ մեծասրտութիւնն, անտարակոյս, չէ խուսափել Եըլդըզ Քէօշկի մենաւորի կասկածոտ խելքից, որ թափանցած կը լինի այդ գաղտնիքի ամենանուրբ կողմերը:

Բայց սակայն, յիրաւի, քիչ չափազանց է այդ ընթացքն այն վանդականիստ կենդանիի կողմից. Նա շատ է ի չարը գործ դնում իր գիտութիւնը ղուրանական գաղտնիքի մասին, թէկուզ լինի ինքը հէնց մարգարէի յաջորդը: Այսպէս, Ռամազանի վերջին օրւայ նախընթաց օրը, երբ հետևեալ առաւօտը նա պէտք է զարթնէր և դեռ իր հիւրիների գրկից դուրս չեկած՝ դողար, ինչպէս տերև, մտածելով որ իր գլխին իր „հաւատարիմ“ մուսուլմանները չը լինի թէ դաշոյն փայլեցնեն կամ գնտակով որոտան — նախընթաց օրն, ասում ենք, այդ քաջերի արքայազնը լալիս էր իր մօր առջև, պաղատելով, որ ծերունի պառաւն ընկերանայ իր որդու հետ ամբողջ ճանապարհին, որովհետև եթէ իրան սպանէին, իր մօրն էլ սպանած կը լինէին և կամ իրան չէին սպանիլ... Եւ մօր առջև ծնկաչոք՝ նա լալիս էր պաղատագին, և նրա աչքին յանկարծ պատկերացաւ իր երեխայական հասակը, երբ ստէպ հէնց նոյն այդ դիրքի մէջ էր նա գտնվում, բայց... ոչ իր բարի կամքով, այլ բարի կրթութեան նպատակով՝ չար ընթացքի պատճառով երեխայի... յայտնի տեղերը ճիպոտով հարուածելու համար... Ի հարկէ, այժմ, երբ արդէն սուլթան է, գահանիստ վախկոտը զգում է, որ ինքն արժանի է այդպիսի... փափուկ ծեծի, բայց այլ ևս ոչ թէ մօր, այլ ժողովրդի կողմից...

Եւ նա, հաւանական է, կուտէր այդ՝ կատարելապէս արժանաւոր և իր սուլթանական ընթացքով վաստակած՝ ծեծը, բայց բանն էլ նրանում է, որ նա զուր տեղը չէ մարգարէի մարգարէական յաջորդը: Իր մօր հագուստների տ··կ կծկված պահվելով և իր կառքն իսկ դարձնելով երկաթեայ մի վանդակ, շրջապատված մէկ ուրիշ, իր պահապանների շարժուն, բայց առաջինից ոչ պակաս հաստատուն, վանդակով, — մեր սուլթանների սուլթանը, քաջ Օսմանի թոռնիկների թոռնիկն այնքան պստիկացել էր իր նստած տեղը, որ մինչև իսկ ճիճուի տեսքով էլ չէր երևում, որ իր զայրացած ու դժգոհ ժողովուրդը տեսնէր նրան և նողկանքով կոխոտէր...

Պարզ բան է, որ այդ վատն իր ձեռքի տակ ունի մեծ մարգարէի կախարդական թալիսմանը, որով պէտք եղած ժամանակը վախկոտ միապետն ամեն երևակայական հնարքներով կարողանում է այնքան պստիկանալ, որ ա գ ո գ-մ ա գ ո գ մանրահիւլէի մեծութեան է հասնում՝ ընդունակ ասեղի ծակով իսկ անցնելու:

Երևի, սիրտը-դող թշուառականն այդ օրը շատ է անիծել իր մարգարէին, որ իրան ստիպում է այդպիսով ցատկող միմոսի, հօգգաբազի, աճպարարի (saltimbanque) օյինբազութիւններն անել:

Ժամանակնե՜ր, ժամանակնե՜ր... Անշուշտ բռնապետական աշխարհի վախճանի օրերը մօտեցել են... Այլապէս կարո՞ղ էք միթէ երևակայել մի Ներոն, մի Կալիգուլա, մի Նապօլէոն՝ նոյնքան գաճաճ, նոյնքան թզուկ, նոյնքան ստորացած, որքան այդ աճպարար բռնապետը...

ԱՍՊԱՏԱԿԻ ՀՐԱԺԵՇՏԸ.

1.

Եկուր, կընիկ, պագնեմ քեզի՝
Վերջին անգամ թերեւըս,
Կերթամ ահեղ դաշտը Մարսի—
Հաստատ ըլլայ թող թեւըս:
  Թմբուկ չալէք,
Յառաջ, ընկեր կտրիճներ,
  Յառաջ քալէք,
Մեր դէմ կը գան դահիճներ:

2.

Քաղցըր մանուկ, որ կը ժպտաս
Մօրըդ գրկէն երեսիս,
Պայծառ յուսոյ դու լոյս ինծ տաս,
Մինչ մահն է իմ առաջքիս:
  Պիտի մեռնիմ,
Իսկ դու մահուս իմ մնաս.
  Դողով կորնիմ՝
Գերեզմանիս տէր ըլլաս:

3.

Տուէք սուրըս, կապեմ գօտիս,
Ձէնք ու հրազէն եւ դաշոյն!..
Ինչու՞ ոտքիս կը փաթթիս,
Հաւատարիմ դու իմ շուն.
  Չարագուշակ
Ունիս զգացում, ո՞վ անբան:
  Սուս. քո փէշակ —
Տանըս ըլլաս պահապան:

4.

Նըժոյգս ահա կը խրխնջայ
Եւ պայտերով կը զարնէ...
Ո՞վ ականջիս կը մրմնջայ,
Կարծես հառաչ նա կանչէ:
  Դու՞ ես, իմ հայր,
Դէմքիդ վըրայ տըխրութիւն...
  Ինչու՞ համար...
Տուր ինծ քո սուրբ օրհնութիւն:

5.

Որի՞ խեղճուկ հեծկլտանքը
Սըրտիս խորըն իմ յանգաւ...
Մա՜յր իմ, մա՜յր իմ, քո տանջանքը
Օրօրանէն իմ ծագաւ:
  Լա՛. արցունքը
Քո ծերունի հասակին

ԱՐԵՒԱԾԱԳԻՆ

ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

ՆՈՒԷՐ ՏԻԿԻՆ Մ. Ն... ԻՆ.

(Շարունակութիւն) [1]

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

XIII

ԽՈՒԶԱՐԿՈՒԹԻՒՆ.

Խորը կիրճի մի նեղ անցքում, որ կազմում է մի հսկայ օրօրան, թաղնված քնած էր Ա... քաղաքը: Ոչ մի շարժում չէր նըշմարվում: Սուլթան Բայազիդի նշանաւոր մզկիթի զոյգ մինարէթների շէրիֆէներից (մզկիթի վերի մասը, ուր մուազզինն ազան է կարդում) լսվում էին մուազզինների (ազան կարդացող) բարակ, անուշ ու տխրահնչիւն ձայները: Արաբական մեղեդիների մելամաղձոտ եղանակների արձագանգը միանգամից կրկնվում էր մի քանի կողմերից և լուռ տարածութեան մէջ սփռվում, նուաղում և ջութակի ամենանուրբ ձայների նման թրթռացնում, ցնցում էր սրտերի ամենափափուկ թելերը: Ջրերի քամին շվալով անցնում էր. Նա իր հետն էր տանում անուշ ձայների էլևէջները և ներդաշնակ ձայնով օրօր էր կարդում քնացած քաղաքին: Գետի ափերի վրայ շինված ջրանիւները և ալիւրի գործարանների մեքենաներն իրանց միօրինակի ճռճռոցով աղմկում էին լռութիւնը: Քաղաք Սավայիդ թաղի փողոցներում մերթ ընդ մերթ լսվում էին սրերի չխչխկոցներ: Արշալոյսի աղօտ լոյսի մէջ ման էին գալիս ըստուերներ, որոնք գիշերային շրջիկ ոգիների նըման մի տեսակ սարսափ էին գցում հեռուից նկատողի վրայ: Քարիւղի լամպայի լոյսերը երբեմն երևան էին հանում սրերի փայլուն պատեաններ, պաշտօնեաների համազգեստներ, կըրծքերի վրայ կախված շքանշաններ, խոշոր կարմիր ֆէսեր և զէնքերի անորոշ պատկերներ, որոնք իրանց վայրկենական տպաւորութիւնը թողնելով, նորից մթնով էին ծածկվում: Կարծես կատարվում էր մի երկարատև մնջկատակութիւն:

Սավայիդ թաղի իւրաքանչիւր անկիւնում կանգնած էին մարդիկներ. Նրանք չէին շարժվում. Հազար և մի գիշերների կախարդական ազդեցութիւնից կարծես նրանք քարացել մնացել էին: Մօտակայ մի տան պատուհանների պատշգամներից լուռ վեր էին բարձրանում անխօս մարդիկ...

Դրացի փողոցների մէկից դուրս եկաւ մի բարձրաստիճան թիւրք պաշտօնեայ. Նրան շըրջապատած էին տասնի չափ ուրիշ պաշտօնեաներ: Նա նշմարելով անկիւնների մարդ-արձանները, չը վրդովվեցաւ: Փողոցի մէջտեղի աղբիւրին հասնելով, նա նշմարեց ոստիկանապետ Դէլի-Խուրշիդին, որը ձմեռնային նօթի գայլի նման պպզել, նստել էր մութ անկիւնում: Խուրշիդն անհանգիստ էր երևում. Նրա բերանից դուրս էր փչում արաղի սաստիկ հոտը, մերթ աննպատակ կերպով հայհոյութիւններ էր անում մի քանի ոստիկանների, որոնք իրանց սուինաւոր հրացաններին յենված կանգնել էին և լուռ ծիծաղում էին իրանց պետի, հարբած չաւուշի վրայ: Տեսնելով նազըրին, Դէլի-Խուրշիդը ոտքի կանգնեց, աշխատեց ուղղել իր բաճկոնը, կօճկել կոճակները:

Նազըրը լաւ էր ճանաչում Դէլի-Խուրշիդին: Նրա վիճակի վրայ ուշադրութիւն չը դարձնելով, առանց բարևելու, հարցրեց.

—Ի՞նչ տեղեկութիւններ հաստափորի մասին:

—Ամեն ինչ, պատասխանեց Խուրշիդն ինք-

1) Տես „Ապտակի“ առաջին տարի Nrs 7 — 12 եւ երկրորդ տարի Nrs 1 — 8.

Ը սփոփանքը
Եւ գոհարն իմ պըսակին:

6.

Բայց էր տըխրէք. սրտով զըւարթ
Դէպի մահ չէ, որ կերթամ,
Այլ դէպի փառք, այլ դէպի մարտ,
Ազգիս զինւոր մէկ անդամ:
Ապագաւակը
Կուի սիրած դաշտի վրան
Երկնի տակը
Պիտ ունենայ գերեզման...

7.

Աւա՜ղ, ի՞նչ է... արտասուքը
Ի՞մ աչքըս ալ կը թրջէ...
Հերի՛ք... ծընող եւ կին, սուգը
Ձեզ կը թողում... ինձ պէտք չէ...
Թմբուկ չալէք,
Ցառա՜ջ, ընկեր կըտրիճներ,
Ցառաջ քալէք,
Պիտ յաղթենք մեր դահիճներ:

ԽԵՆԹԸ.



0

Խնճոյքի մը մէջ կոնծաբանութեան ամենատաք միջոցին, երբ ճառեր ճառերու ետեւէն կը սահէին քէֆ ընողներու բերնէն ի դուրս, ինչպէս գինիի համայիչ հեղուկը կը սահէր անոնց բերնէն է ներս, մէկը ելաւ և բաժակը վեր բարձրացնելով, առաջարկեց Զէյթունցիներու կենացը.

—Խմենք մեր քաջերու կենացը, ըսաւ. խմենք... Բայց ո՜հ, ինչո՞ւ Զէյթունը չորս ամիս փայլուն ապստամբութիւն ընելէ վերջ, այսօր դադարեց իր սուրբ կռիւը, այսօր հաշտութիւն կապեց Թուրքին հետ, այսօր դադարեց արիւն վօթել մեր վատ թշնամիներու կըրծքէն... Ինչո՞ւ չի շարունակեց իր փայլուն գործը և ամբողջ Հայաստանին կամ գէթ Կիլիկիային համար ձեռք չի բերաւ ազատութիւն: Ինչո՞ւ գոհացաւ նոյն իսկ իրհն համար, այնքան փառաւոր յաղթութիւններէ ետքը, թեթեւ բարենորոգումներու պահանջով միայն և չուզեց որ մէկէն իրեն տան կատարեալ ինքնավարութիւն, անկախութիւն: Անիկա կըլլար այն ատեն փայլուն փարոս մը, անշէջ աստղ մը, լուսեղէն ջահ մը, որ շարունակ կը փայլէր հայութեան գլխուն և օր մ'ալ կազատէր հայ ազգն իր դառն վիճակէն...

—Իսկ այժմ... ո՜հ, այժմ, սիրտս կը կտրատուի, աղեքս կը գալարի, խելքս կը ցնդի, ուղեղս գանգէս դուրս կը պայթի, երբ կը խորհիմ, որ այդ յոյսն ալ ես կորսնցուցինք, որ ալ յոգնեցան Զէյթունցիներն իրենց կռւէն, որ թոյլ գտնվեցան, որ չը կրցին մինչեւ վեց ամիս, տասն ամիս, տարի մը առնուազն կռուիլ, միշտ կռուիլ, մինչեւ որ իրենք կամ կատարեալ ազատութիւն ձեռք բերէին իրենց, Կիլիկիոյ, Հայաստանի և կամ խպառ ջարդուէին

քաջաբար, և ո՛չ թէ տկարութեամբ, անխոհեմութեամբ դադարէին կռուելէ: Այո, անոնք իրենց պահանջած չափաւոր բարենորոգումները ձեռք բերին, պատւով դադարեցին կռուելէ, մեծ օրինակ մ'էր հայոցս համար իրենց գործը, պարտութիւն չէր իրենց կրածը, այլ դարձեալ յաջողութիւն մ'էր... սակայն ... սակայն կարելի՞ բան էր, որ այդպէս ընէին... Ինչո՞ւ ըրին, ինչո՞ւ չը շարունակեցին, ինչո՞ւ իրենց արիւնը մինչեւ վերջին կաթիլ չի թափեցին, ինչո՞ւ... ինչո՞ւ...

Այդ վերջին խօսքին վրայ քէֆ ընող հասարակութեան մէջ յանկարծ ուսկից, ինչպէս երեւցաւ մեր... Սատանան... այո, „Ապտակի“ նոյն ինքն Սատանան... և գանձանակ մը ձեռքը, ցաւագար դիմագծով մը Սատանան ըսկսաւ պտտիլ սեղանի շուրջը և մօտենալով ամեն մէկին, համեստ և խղճուկ ձայնով կը շշնչէր ճառ մը:

Անիկա կըսէր.

—Զէյթունը քաջութեամբ չորս ամսէ ի վեր յաղթանակներ տարաւ և պատւով հաշտութիւն ըրաւ... Անոր հաշտութիւն ընելը ստիպեալ էր... Տիարք, սիրելի՜ տիարք, դուք, որ չօգնեցիք Զէյթունին ո՛չ իր ապստամբութեան ատեն, ո՛չ առաջ, դուք, որ հանգիստ ու տաք տեղ նստած էիք և քէֆ կընէիք, դուք, տիարք, այսօր անոր գլխուն խըրատ կը կարդաք, թէև անորմով կը պարծիք, կաղաչեմ գէթ այժմ քիչ մը դրամ նետեցէք այս գանձանակիս մէջ, որ վիրաւոր Զէյթունցիներու վէրքերը կապելու միջոց ըլլայ, որ մընացեալ քաջ Զէյթունցիներուն քիչ մը հաց ըլլայ, որ շատ տեղերէն փախած և անոր մօտ ապաստան գտած և անոր սակաւ հացով ամիսներով ապրած, իսկ այժմ անօթի, մերկ, հիւանդ և կիսամեռ 30,000 հայերու օգնութիւն ըլլայ... Կաղաչեմ, տիարք, կաղաչեմ...

Հանդիսականներու ընդհանուր ամաչկոտութիւն ու շփոթութիւն... Տեսարան:

Իսկ իր այդ ճառով Սատանան կը պտտէր համեղ ու հարուստ կերակուրներով և խմիչքներով զարդարուած սեղանին շուրջը... Ի նպաստ Զէյթունին ասոր ապստամբութենէն առաջ, ապստամբութեան միջոցին և վերջը Սատանային ժողուած դրամներու գումար —

0

ՍՈՒԼԹԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄ.

Իսկ տակաւին կը համարձակին ըսել, թէ սուլթանը չէ սկսած գործադրել իր խոստացած բարենորոգումները հայերու մէջ: Աւելին ալ կընէ: Անիկա ուղղակի սկսաւ բարենորոգումով մը, որ խոստացած ալ չէր: Այդ բարենորոգումն ընդարձակ և մեծ է իր սկըզբունքներով: Նա մտցուց յ ա ռ ա ջ ա դ ի մ ո ղ հ ա ր կ ը: Այսպէս անիկա ձերբակալել կուտայ „պարարտ“ հայերը և հարցաքննել կուտայ.

—Որչա՞փ է քո տարեկան հասոյթը:

—՞.՞.՞

—Պատասխանէ՛ շուտ:

—Հազա՜րհս... հասոյթս... հազար լիրա:

—Սուտ ես, գեաւուր... ամենէն պակաս երկու հազար լիրայի հասոյթ մը ունիս: Դու կամբաստանուիս յեղափոխական յանցանքի մը մէջ. եթէ հազար լիրա տաս, գլուխդ պիտի ազատես: Եթէ մերժես, տունդ պիտի աւերենք:

Հազար լիրան կը հատուցուի:

Ուրիշի մը:

—Ես գիտեմ որ տարեկան հասոյթդ հազար հինգ հարիւր լիրայէն մինչեւ երկու հազար հինգ հարիւր լիրա է: Քո ազատման գինը մեր օրինաց այս-ինչ յօդուածին զօրութեամբ հազար հինգ հարիւր լիրա է, որ պիտի տաս: Փառիշահը սաղ մնայ. երկրիս մէջ անիկա միայն իրաւունք ունի հարուստ ըլլալու, և մասնաւորապէս գեաւուրներուն այսուհետեւ արգիլեալ է շատ փարա ունենալ. ունեցողն իր հաւատարիմ հպատակութեան ապացուցման համար՝ իր հարստութեան կէսէն աւելին պիտի հատուցանէ կառավարական սնտուկին:

„Պարարտ“-հարցաքննուող ամենուն ալ երեսները (որք հոտ բաւական մեծ թւով կլօրկլօր կեցած էին) գունատեցան, կանաչեցան...

Մեր քննութենէն իմացանք, որ այդ հիմնական բարենորոգումը, այդ „յառաջադիմող հարկը“ մտցուիլը կառավարութեան խելացի և արդարասէր ընթացք մ'է եղեր: Երբ սուլթանի անձնական սնտուկը կը լեցուի կլօրիկ ոսկիներով, որ կառավարական սնտուկէն գացող յատուկ խողովակի մը միջոցով կը կատարուի շընորհիւ սուլթանի... եւ ժամանակակից գիտութեան, —երբ այդ այդպէս կըլլայ, կառավարական սնտուկին մնացորդները կը փոխադրուին նախարարներու և այլ բարձրաստիճան պաշտօնեաներու գրպանը: Եւ որովհետեւ այլ ևս դրամ չի մնար, Ռամազանի տօներուն առթիւ այդ նշանաւոր յառաջադիմող տուրքը սկսան գործադրել, որ տարիներով թոշակներն անվճար մնացած անօթի ծառայողներուն գէթ մէկ-երկու ամսուան թոշակները վճարուին:

Այդ խելացի բարենորոգման առթիւ մենք կրնանք միայն կառավարութիւնը ծափահարել... մինչեւ որ օր մը գայ, երբ կարենանք անիկա մեր ծափով հարել:

ԽԵ՛ՂՃ ԶԷՅԹՈՒՆ.

Խե՛ղճ Զէյթուն, ո՛ր օրին հասար, որ վախկոտ թզուկներն իրանց հսկայ կարծեցին...

—Զէյթունը պէտք էր շարունակէր կռուել և ի վերջոյ ջարդվէր, և այն ժամանակ յեղափոխական գործը... յաղթանակ կը տանէր (՞՛). իսկ այսօր նա չը ջարդվեցաւ և մնաց կանգուն իր յաղթութեան փառքով... և դրանով կ ո ր ա ւ (՞՛) հայ յեղափոխութեան ամենանշանաւոր բերդերից մէկը...

Այդ հրէշաւոր հակասական տրամաբանութիւնը ծախվում է հայ միամիտ ժողովրդին իբրեւ յեղափոխական խորիմաստ տրամաբանութիւն...

Ա՜խ իմաստա՜կ Փանֆարօններ...

—Եթէ Զէյթունին օգնէինք էլ նիւթապէս և նրա ապստամբութիւնը, փոխարէն չորս ամսի, տեւէր նոյն իսկ տասն ամիս — է՛հ, ի՞նչ օգուտ դրանից...

Այդ էլ մէկ ուրիշ տեսակ հայ „գործիչների“ խօսքն է՝ հայերի ստոր անտարբերութիւնն արդարացնելու համար ասված... Ա՜խ, ցինի՜կ, աներես աչքակապներ... Ի հարկէ, եթէ օգնէիք, Զէյթունցիին ույժ տված կը լինէիք և այդպիսով, ուրեմն, Հնչակեաններին ևս, որոնք այնտեղ առաջնորդներ էին ապստամբութեան... „Հայրենասէր գործիչները“ միթէ այսպիսի բան կանէին... հարկաւ. ո՛չ, թէկուզ ամբողջ Զէյթունն էլ քանդվէր...

Հիմա եկ և էշը ցեխից հանիր. „գործիչները“ տեսէք, թէ ինչ երկու հակասական տեսակէտով են յարձակվում այսօր Զէյթունի վրայ... Ի՞նչ մտածէ խեղճ Զէյթունցին և այդ անգործ և տաք տեղ նստած խելօք տըխմարների ո՞ր մէկի խօսքին կշիռ տայ...

Ընշուշտ, էլ՛ իրա, Զէյթունցիի, արածը

Նախատահ կերպով: Գեավուրը տանն է մեր հայ լրտեսներից մէկն ամեն ինչ հաղորդել է մեզ. շիշման ուղեցել է գործից քաշվել, իր պարտապաններին հետ մաքրել է իր հաշիւը. ասում է որ մաղզայի դրամարկղը մինչեւ բերանը լիքն է ոսկիով. մենք լաւ, շատ լաւ գիտենք այսօր, էֆէնդըմ...

Ոսկիների ձայնը լսելիս, Նազըմի իր քնատութիւնից կարմրած աչքերը բաց արեց. ագահութիւնն իր ծայրայեղ աստիճանով պատկերանում էր նրանց մէջ:

—Մենք էլ էս օր կը մաքրենք մեր հաշիւը, յարեց նա, իր խօսքերին հեգնական ձեւ տալով: Մեր հաշիւը շատ պարզ է. մենք խըճճըված հաշիւներով չենք ձանձրացնիլ նրան:

Առաջանալով, նրանք հասան մի հսկայ դռան, որի մի կողմից փողրակների միջից խուլ ձայն էր տալիս մի մեծ առու. հոսելով ղառիվար, գոռում էր, կարծես ուզում էր դուրս պրծնել իրան բանտարկող նեղ խողովակներից, բնութեան խուլ ականջի դիմաց..

Մի ոստիկան զինւոր մօտենալով բակի մեծ դռան, սկսաւ զարնել նրա մուրճը: Քնից նոր զարթնած մի ծառայ, մրթմրթալով և հայհոյելով, անգիտակցաբար բաց արեց պստիկ դուռն առաւօտեան այսքան կանուխ այցելող անսպասելի հիւրի առջեւ: Տեսնելով զինված պաշտօնեաներին, սարսափած ետ-ետ քաշվեց և ապշած, զարմացած մնաց: Նրա մէջ ծագեցին սոսկալի կասկածներ:—Փլաւ աղային տունը, ոչնչացաւ նա, շանը ոտքն առտուն կանուխ բարիք չը բերեր իրա հետ, մտածում էր նա այդ վայրկենական ապշութեան մէջ արձանացած մնալով, մինչեւ որ գինով ոստիկանապետի խաչոտ ու անարգական ձայնը զարթեցրեց նրան:

—Ի՞նչ ես մտածում, ախմախ, հայվան հէրիֆ (յիմար, անասուն մարդ), բղաւեց Խուրշիդը, աղադ չարթնացնես. մենք հօ մինչեւ երեկոյ ձեզ սպասելու չենք, դինսըզ Փէսադներ (անկրօն խառվարարներ), կրկին հայհոյեց նա ըսպառնական շեշտով:

(Կը շարունակվի) Վ.Իթ.

ամենայարմար ու միակ ելքն էր, և այդ եզրակացութեան գալով, քաջ Զէյթունցին կարող է իր դէմ ջեզուիտաբար և անխոստովանելի դիտումներով յարձակվողների վրայ, իրան մազի չափ օգնութիւն չանող, բայց իրանից, Զէյթունից, հրաշքներ պահանջողների վրայ և վերջն իրա, Զէյթունի, հաշէն յիմար իմաստունի անճոռնի իմաստակութեամբ պարապվողների վրայ, մի խօսքով, այսօր իրան քննադատող թզուկների վրայ մի բան անել. — թքել մէկ՝ աջ և մէկ էլ՝ ձախ:

ԺԱՄԱՆՑ.

Աբրտհամ փաշա Երամեան սուլթանին կողմէն ղրկուած էր Տ. Մատթէոս Իզմիրլեան Պատրիարքին, անկէ պահանջելու համար կամ երախտագիտական ուղերձ մը, կամ հրաժարականը. „տեղի տալ կամ տեղը տալ“ — se soumettre ou se semettre : „Ապտակ“-ի աներեւոյթ թղթակիցը սղագրելով այս երկու անծանաւորութիւններու տեսակցութիւնը մեզի ղրկած է:

* * *

Պ ա տ ր ի ա ր ք ը. Ինչպէս էք, աղէկ էք, փաշա:

Ա բ ր ա հ ա մ փ ա շ ա. Էյ իշտէ, նէ աղէկ, նէ գէշ:

Պ տ ր. (քմծիծաղով). Բարով եկաք, երբէք ձեզի պատրիարքարանին կողմերը տեսնելու բարեբաղդութիւնը չէինք ունեցած. ազգային գործերէն շատ հեռու կը մնաք, շատ:

Փ ա շ ա ն. Էյ ինչ ընենք, սրբազան, վախիթները ասանկ կ'ընեն: Ատենօք ես ալ բաներ կ'ընէի, էբէյիճէ ալ փարա տուած եմ, գիտես, առջի պատրիարքին օրովը: Ան ուր է սա վանցի հէրիֆ մը կար, հէմ քանի մը հազար ոսկիս առաւ, պատրիարքարանը պարտք ունի ըսելով, հէմ ալ ինծի չը պսակեց: Ինչ է նէ, անկէ ետքը եկողը բէք շնորհքով մարդ էր, սա ուր է մեռաւ նէ, ան ուղածս ըրաւ, ուզածս ըրաւ:

(Պատրիարքը քիթը բերանը կը թթուեցնէ. այս մինչոցին սուրճը կը բերուի. քիչ մը լռութիւն. սպասաւորը դուրս կ'ելնէ սուրճը լմնալէ վերջ):

Փ ա շ ա ն. Ամա սրբազան, ես քեզի տահա ծեր գիտէի. ամա կէնճ ես եղեր. մօրուքիդ կէսը սեւ է:

Պ ա տ ր. (կէս ժպիտով մը) Մենք ձեզի համեմատութեամբ երիտասարդ կը սեպուինք:

Փ ա շ ա ն. Ամա դուն շատոնցուան մարդ ես, Սրբազան: Ուր է ան Ալի փաշային օրովը քեզի մէյ մը Երզրումէն Ստամպոլ բերին նէ, սա բէք աղէկ միտքս է. ան ատենը մեր տունները վրադ շատ կը խօսէին. խելացի մարդ է, կ'ըսէին, մօսկովին թարաֆ է. հէմ քեզի անոր համար պատրիարք ըրին:

(Պատրիարքը աչքերը խոշոր խոշոր բացած, զարմացած փաշային երեսը կը նայի:)

Պ ա տ ր. Կը ներէք փաշա, իրաւ որ ինչ ըսել կուզէք չեմ կրնար հասկնալ:

Փ ա շ ա ն. Ատ չէ ամա, Սրբազան, ճիրը Երուսաղէմ պիտի երթաս:

Պ ա տ ր. Ի՞նչ կ'ըսէք, փաշա, Երուսաղէմ ի՞նչ գործ ունիմ. (խստութեամբ) այս տեղ պաշտօնիս վրայ պիտի մնամ, պաշտօնիս վրայ:

Փ ա շ ա ն. Ամա ան տեղի պատրիարքութեան պաշտօնդ ալ գէշ պաշտօն չէ. սա տեղինին պէս զոր գործ չէ. և սուրբ տեղ է, վանքին մէջ կ'իյնաս կ'ելլաս:

Պ ա տ ր. (Դաժան դէմքով). Կը սխալիք, փաշա, իմ պաշտօնս հոս է միայն. եթէ զիս, Երուսաղէմ աքսորելու առաջարկ կ'ընէք, բացարձակօրէն ըսէք. ես մտիկ չեմ ըներ ձեր խօսքերը. ազգիս կամքովն եմ նստած այս աթոռին վրայ (ձեռքը ուժով գրասեղանին զարնելով). ազգիս կամքովը միայն կիջնեմ ասկէ:

Փ ա շ ա ն (ծպիտով). Էյ, էյ, Սրբազան, ինչխտարքի ալ ազգին գործերուն չեմ խառնուիր իսկ, ես նորէն հայ եմ, Գէորգ պէյի զաւակն եմ, ամէն բան կ'իմանամ, ամէն բան կ'իմանամ. ճանըմ դուն Երզրումէն հոս գալէդ ետքը Երուսաղէմի պատ իրաք չընտրուեցար. իշտէ հիմա թամ վախիթն է, ելի գնա:

(Պատրիարքը քիչ մը անհանգիստ շարժումներ կ'ընէ, կարծելով թէ փաշան խելքը կորսնցուցած եկեր է. զանգակը կը զարնէ, քարապանը ներս կը կանչէ, սուրճ մը ելս բերելու պատրուակով:)

Պ ա տ ր. Փաշա, ձեր խօսքերը չեմ հասկընար. Հայոց պատրիարքը ազգին այս ճըգնաժամին կատակաբանութիւններ ընելու ժամանակ չունի. (Աչք կ'ընէ բարապանին որ կեցայ:)

Փ ա շ ա ն. Կատակը ի՞նչ է, սրբազան. դուն Երզրումէն չեկար. սա ուր է մէկ աղէկ պատրիարք մը կար, մեռաւ նէ, անունը ի՞նչ է միտքս չի գար. հա՛ Ներսէս պատրիարք. հրամանքդ ալ, թամամ անունդ միտքս եկաւ, Արթին պատրիարքը չէս:

Պ ա տ ր. Փաշա, այդպիսի կատակներու պատճառը չեմ ըմբռներ:

Փ ա շ ա ն. Ի՞նչ կատակ. ճանըմ իշտէ մէկ օր մը ձեռքս հայերէն ղազէթա մը անցաւ, անկէ իմացայ քի Երուսաղէմի Արթին եպիսկոպոսը ասանկ տեղի պատրիարք եղեր է: Օր մը ալ խօսք եղաւ, Երուսաղէմի պարտքին համար փարա կուզէին ինէ, ըսին քի Արթին պատրիարքը Երուսաղէմի պատրիարք եղաւ, ամա մինչև Երուսաղէմի պարտքը չի վճարէ պիտի չերթայ: Երուսաղէմի պարտքը կը լմննայ մի եա. տէտէիս տէտէին օրէն պարտքը կար: Պարտքը չէ տրուեր, հէլպէթ պատրիարքն ալ չէ գացեր. աղէկ չեմ մտմտացեր: Ես ասանկ գիտէի, ըսել է քի ան գնաց, դուն եկար:

(Պատրիարքը խնդալը չի կրնար բռնել. աչքովը բարապանին նշան կ'ընէ որ ֆինճանները առնէ ալ դուրս ելլէ:)

Պ ա տ ր. Յարութիւն սրբազանէն ետքը ուրիշ պատրիարք մը ալ ընտրուեցաւ, անկէ ետքը ես ընտրուեցայ:

Փ ա շ ա ն. Վա՛յ. էյ անունդ ի՞նչ է, սրբազան:

Պ ա տ ր. (Ծիծաղելով) Մատթէոս եպիսկոպոս Իզմիրլեան:

Փ ա շ ա ն. Աղէկ, աղէկ, լսած չէի, ինչ է նէ: Է՛յ ասա պատրիարքութենէն ի՞նչ կը հասկընաս. շատ ալ վախեր կայ թագաւորէն:

Պ ա տ ր. (կայծակնացայտ աչքերով). Փշո՛ տաթոռ, փշո՛ տաթոռ. բայց երբ Հայաստանեայց եկեղեցին կը մարտիրոսանայ նը-մանը չի տեսնուած հալածանքով, երբ ազգիս արիւնը գետի պէս կը հոսէ, փաշա՛, փաշա՛, ես պիտի ձգեմ վատօրէն փախչիմ, ի՞նչ կ'ըսես:

Փ ա շ ա ն. (Շուարած) Ճանըմ սրբազան, ի՞նչ կը բարկանաս. քեզի ո՞վ կ'ըսէ ձգես փախչիս, ելլիր մեզի եկուր, միսաֆիր եղիր, քեզի հետ ավի կերթանք. ի՞նչ պիտի ընես ասա տեղը:

Պ ա տ ր. Փաշա՛, կը զարմանամ որ այսպիսի տագնապալից ժամանակներու մէջ կատակաբանութիւններ ընելու սիրտ ունիս...

Փ ա շ ա ն. Ճանըմ ի՞նչ կ'ըսես. իշտէ սա վերինն ալ չիյտեմ բաներ մը կ'ըսէ կոր եղեր: Ես պաարիարքը թող երթայ տէ, ես հայերուն աղեկութիւններ պիտի ընեմ կ'ըսէ եղեր: Դուրսը պիտի չի կենաս եա՛, անոր ալ կամքը տեղը տարած կ'ըլլաս: Հէմ, սրբազան, ձեռքիս տակը ես շատ աղուր տաճկի կնիկներ ալ ունիմ, փաշայի կնիկներ, մէկ երկուքն ալ քեզի կուտամ, քէֆ կ'ընես:

Պ ա տ ր. (Համբիչը հանելով կ'սկսի մտքէն „Տէր ողորմեա“ ըսել: Ու զգածեալ ձայնով մը.) Փաշա՛, կը մոռնաս որ Քրիստոսի պաշտօնէին հետ կը խօսիս:

Փ ա շ ա ն. Ճանըմ, սրբազան, մենք գիտենք. ատենօք ամուճայիս, կարապետ պէյին տունը, եպիսկոպոս մը կուգար, անոր հետ ասանկ բաներ շատ կ'ընէինք. քէֆլի մարդ էր. ան ի՞նչ եղաւ: Անունը ի՞նչ էր:

Պ ա տ ր. Աստուած լուսաւորէ հոգին, Խորէն եպիսկոպոսը:

Փ ա շ ա ն. Հա՛, հա՛. ան նայէ իմ խաֆայիս տէնկ եպիսկոպոս էր: Էյ սրբազան, հասկրցայ, դուն խօսք պիտի չի հասկնաս: Մեղքը ինէ եղաւ. բարա չես ուզեր, ավի չես երթար, աղուր կնիկ չես ուզեր. ես քեզի պէս մարդուն ընտո՞ր խօսք հասկցնեմ: Մեղքը ինէ եղաւ: Քեզի հետ գլուխ չ'ելլցուիր. դուն սուրբի պէս մէկը կ'երևաս, Աստուած կարողութիւն տայ, սրբազան, Աստուած կարողութիւն տայ: Ամա, սրբազան, դուրսը ամենուն ըսէ քի քեզի շատ զոր ըրի որ պատրիարքութենէդ ելլես. գիտես եա՛, ան իմանայ նէ... իշտէ ալ գիտես...

(Պատրիարքը կ'սկսի ծիծաղիլ. փաշան կը մեկնի).

Պ ա տ ր. (մինակ մնացած). Ինչ է նէ, սա նորէն աղէկ մարդ է. խենդ մենդ ամա, վարպետորդի է, գէշ մարդ չէ: Ա՜խ, ան նզովից արժատ նուրեանը, ձիւթի պէս կը փակչի որ հրաժարիմ, բայց ես իրեն գիտցածը չեմ:

ՀՐԹԻՒ.

Ծանօթութիւն „Ապտակի“-

„Ապտակի“ աներեւոյթ թղթակցին այս սղագրութիւնը ծերերնիս համնելէն ետքը ստացանք „Մշակի“ յունուար 13 ի թիւը. որուն Պօլսոյ թղթակիցը յունուար 2 թուականով կը գրէ հետեւեալը.

„Անցած երեքշաբթի օր, դեկտեմբերի 26-ին, Երամեան Աբրահամ փաշան պատրիարքարան եկաւ, ըսելու Պատրիարքին որ կամ „կարգի գայ“ կամ հրաժարի: Աբրահամ փաշան հիմայ բոլորովին անծանօթ եւ քաշուած անծաւորութիւն մըն է. Սուլթան Ազիզին ժամանակները նշանաւոր դիրք ունէր, իբր Եգիպտոսի ներկայացուցիչ, ամեն օր պալատն էր եւ սուլթանը կը զուարճացնէր հետը նարտ խաղալով եւ ըմբշամարտելով: Սակայն Ազիզին մեռնելէն ի վեր բոլորովին քաշուած կապրի, մինչեւ վերջը որսալով ծուկ, նապաստակ եւ թուրք կիներ: Ազգային գործերու մէջ բնաւ մտած չէ. այնպէս որ խեղճ մարդը նոյն իսկ մինչեւ պատրիարքարան գացած օր չէր գիտէր թէ ով է հայոց պատրիարքը:

Պատրիարքը ալէտք եղած պատասխանը տուած է Աբարհամ փաշային, յայտարարելով որ ինք ազգին կամքովը ընտրուած է եւ այդ կամքը միայն կրնայ զինքը հրաժարեցնել:

ԱՆԻԾՎԱԾ ԴՆՉԱԿԱԼ.

Ինչպէս շնիկների հետ են անում, որ չը հաջեն և չը խածնեն, „Հնչակի“ հակառակորդներն իրանց տխմարութեամբ իրանք իրանց բերանները դնչակալ դրին և այլ ևս չը կարողանալով իրանց արհեստը կատարել Հնչակեան կուսակցութեան դէմ, այսօր ներքին չարութիւնից իրանց միսն են ուտում, կատաղում են: Նախանձելով Զէյթունի հերոսական ապստամբութեան, նրանք չուզեցին խոստովանվիլ, թէ Հնչակեաններն են, այդ „օտարական յեղափոխականներն,“ են վարիչներն այդ ապստամբութեան, և այսօր, երբ այդ ապստամբութիւնը վերջ գտաւ, նրանք կատաղած են, որ չեն կարող յարձակվել Հնչակեանների վրայ, թէև յարձակվելու տեղիք էլ իսկ չը կայ, այլ և ընդհակառակը: Սակայն ըստ երևոյթին կարելի է խաբել հասարակութեանը և Զէյթունին ցոյց տալ իբրև „ընկած“. մեր հակառակորդներն այնքան բծախնդիր չեն, որ ճշմարտութեան համաձայն խօսեն... վերջ ի վերջոյ, մի բան այսօր պարզ է, որ գրանք իրանց բերանին դնչակալ դրին և այսօր զզջալով իրանց այդ յիմարութիւնը, կատաղած են, կատաղած են... Անունդ յիշվի, մեծ Պաստեօր...

Խելքդ իմաստուններ, այդ ձեզ լաւ դաս... Ախր ինչո՞ւ չը լսեցիք „Հնչակի“ բարի խորհուրդը, երբ շաբաթներ առաջ նա ձեզ խրատում էր, թէ խոստովանվեցէք, որ Զէյթունի ապստամբութիւնը Հնչակեանների գործն է, որպէս զի եթէ մէկ օր այդ ապստամբութիւնը դադարէ (թէկուզ պատուաւոր կերպով Զէյթունցիների համար), դուք ուրախանալով և այդ դադարումն իբրև պարտութիւն ցոյց տաք, հաշտութեան պայմանների այն կէտերը, որոնք Զէյթունցիին զիջանել է սուլթանը, ծածկէք, հրատարակութեան չը յանձնէք, և այդպիսով աղատ ասպարէզ ունենաք ձեր հայհոյանքի աղբը Հնչակեան անուան վրայ թափելու: Դուք չը լսեցիք այդ խորհուրդը, և հիմա, դէ՜հ, գնացէք ինքներդ ձեր մէջ կատաղեցէք, այրվեցէք: Ձեր կոյր թշնամութեամբ դէպի „Հնչակը“ դուք ինքներդ ձեզ անդամալուծեցիք, դուք ձեր անիծված դնչակալով ձեզ զրկեցիք ձեր միակ զէնքից — ձեր միակ արհեստից...

Այդ էլ ձեզ դաս... Ա՜խ, անունդ անմահ, մեծ Պաստեօր...

ԼՕՆԴՕՆ. „ՀՆՉԱԿԻ“ ՏՊԱՐԱՆ.